

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

2015թ. հունիսի 10-ին տեղի ունեցած

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի

խորհրդի N15 նիստի

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 17 անդամներից 16-ը:

### Օրակարգ:

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում/ըստ ամբիոնների ուսումնական խորհրդատուների վերլուծության/:
2. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի տարեկան հաշվետվություն:
3. Ամբիոնների տարեկան հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր 1. Նելլի Ադամյանի «Հանրակրթական բարեփոխումների առաջադրած մանկավարժական-մեթոդական կարիքների ուսուցման ուղեցույց» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկում:

**ԼՍԵՑԻՆ՝** 1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում/ըստ ամբիոնների ուսումնական խորհրդատուների վերլուծության/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփումը հետաձգել լուծարքից հետո:

**ԼՍԵՑԻՆ՝** 2. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի տարեկան հաշվետվություն:

/հաղ. Կ.Բարսեղյան/

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը, դասախոս՝ Է.Սուվարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվությունը գնահատել **բավարար:** /այն կկցվի արձանագրությանը/

**ԼՍԵՑԻՆ՝** 3. Ամբիոնների տարեկան հաշվետվություն:

Յուրաքանչյուր ամբիոնի վարիչ ներկայացրեց համապատասխան ամբիոնի տարեկան հաշվետվությունները:

Նշվեց

**1.ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը,**

**2. ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական գործունեությունը/2014-2015ու.տարվա ամբիոնում առկա ժամաքանակը**

ըստ դասախոսությունների. գործնական.սեմինար և լաբորատոր պարապունքների,առկա էլեկտրոնային դասախոսություններ.կուրսային աշխատանքներ առկա-հեռակա,մագիստրոսական թեզեր,մանկավարժական.արտադրական պրակտիկաներ,ՈԻԳԸ սեկցիայի զեկուցումներ/

**3.Ուսումնական գործընթացի ապահովման նյութատեխնիկական բազան/** գրականության առկայությունը, լաբորատոր անհրաժեշտ սարքավորումներ,/

4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2014թ հրատարակած գիտական հոդվածները, գիտաժողովներում զեկուցումները և մեթոդական ձեռնարկները

5. 2014-2015 ուստարում ամբիոնի իրականացրած միջոցառումները

6. Ամբիոնի համակարգչային տեխնիկայի առկայությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկան՝ Անահիտ Գրիգորյանը. Արտաշես Բոյաջյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել **բավարար**

2 Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել **բավարար**

3. Դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել **բավարար**

4. Ուշադրության կենտրոնում պահել կուրսային աշխատանքների,

մագիստրական թեզերի նախապատրաստական աշխատանքները,

պատշաճ մակարդակով կազմակերպել դրանց

հրապարակային պաշտպանության կազմակերպումը:

5. Հատուկ ուշադրության արժանացնել մանկավարժական և

ուսումնական պրակտիկաների կազմակերպմանը:

ԼՍԵՑԻՆ 4. – Նելլի Ադամյանի «Հանրակրթական բարեփոխումների առաջադրած մանկավարժական-մեթոդական կարիքների ուսուցման ուղեցույց» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման երաշխավորելու հարցը ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝-- ֆակուլտետի դեկան՝ Անահիտ Գրիգորյանը, դասախոս՝ Է.Սուվարյանը, ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը: Նրանք նշեցին մայրենի լեզվով ուսումնամեթոդական ձեռնարկի անհրաժեշտությունը բուհի ուսանողների և աշխատակիցների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով աշխատանքի գործնական նշանակությունը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի խորհուրդը նպատակահարմար է գտնում դիմել ինստիտուտի գիտական խորհրդին այն հրատարակման երաշխավորելու համար:

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

10.07.2015թ.